«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ <<Սովորողների մեջ ինքնուրույն ության , նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում>>

Առարկա՝ <<Հայոց լեզու>> և <<Գրականություն>>

Հետազոտող ուսուցիչ՝ Մանուկյան Լիլիա

Ուսումնական հաստատություն՝ Ալափարսի միջնակարգ դպրոց

Չարենցավան 2023

Բովանդակություն

1. Ներածություն ....էջ 3
2. Ինքնուրույնությունն իբրև անձի ձևավորման խթան……..էջ 5
3. Գրականության ակնարկ. Ուսուցման մեթոդներ ……էջ7
4. Եզրակացություն ..... էջ 17
5. Օգտագործված գրականության ցանկ..... էջ18

Ներածություն

Ժամանակակից աշխարհում կրթական զարգացումներն ընթանում են շատ արագ: Այդ առումով էապես փոխվում են ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխհարաբերությունների ձևավորման սկզբունքները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը: Կրթության բովանդակային և մեթոդաբանական խոր փոփոխությունների համատեքստում առաջնային է դառնում կրթական գործընթացի հաղորդակցական-երկխոսական բնույթի ապահովումը ինքնակառավարման, փոխներգործության, տեղեկատվության մատչելիության, մեդիակրթության գաղափարներով: Այս տեսանկյունից կրթության բովանդակության յուրացումն ընթանում է ոչ թե սովորողին պատրաստի գիտելիքների փոխանցմամբ, այլ այնպիսի մեթոդների կիրառմամբ, որոնք ուսուցման սուբյեկտների փոխհարաբերություններին փոխներգործուն բնույթ են հաղորդում՝ ձևավորելով ինքնուրույնություն, ակտիվություն, քննադատական մտածողություն և ուսումնական նյութերի նկատմամբ արժեքային-գնահատողական վերաբերմունք:

Կրթության բովանդակությունն արտահայտում է հասարակության սոցիալական պատվերը. Ժամանակակից աշխարհն, իր կառուցվածքային փոխակերպումներով, պահանջում է անձի այնպիսի կարողությունների ձևավորում, որոնք հնարավորություն կտան ինքնուրույն կողմնորոշվել տեղեկատվական հոսքում, դրսևորել ստեղծագործական, վերլուծական կարողություններ: Իսկ դրան հասնելու համար ուսուցիչը պետք է զինված լինի մեթոդների արդյունավետ ձևերով: Դասավանդմանմիանգամայն տարբեր ձևերի ընտրությունը նախատեսում է գիտելիքիփոխանցում ոչ թե ավանդական սկզբունքով, այլ հնարավորություն է տալիս ինքնուրույն հասնել նյութի իմացությանն ու տալ անձնական գնահատական,արտահայտել վերաբերմունք և հայտնել սեփական կարծիքը:

Գրականությունը բազմաբովանդակ առարկա է և այն հետաքրքիր դարձնելու համար մշակվել են և մշակվում են զանազան մեթոդներ և հնարներ:

Յուրաքանչյուր նյութ հետաքրքիր և ավելի արդյունավետ է դառնում, եթե այն մատուցում ես մեթոդներով: Գրականություն առարկան լայն հնարավորություններ է տալիս աշակերտին յուրացրածը կիրառել իր կյանքում, սովորել, դասեր քաղել,

մտածել, վերլուծել, դատել: Աշակերտին պիտի հնարավորություն տաս գրականության անսահման ծովում լողալու, անկաշկանդ առաջ գնալու, որպեսզի հաճույք ստանա ազատությունից: Գրականությունը լեզվամտածողություն է, արժեքային համակարգ, ինքնադրսևորում և սեփական ես-ը լավ ճանաչելու միջոց:

«Գրականություն» առարկան լայն հնարավորություն է տալիս այն կապել այլ առարկաների հետ («Երաժշտություն», «Կերպարվեստ», «Պատմություն» ևն):Եվ որքան հետաքրքիր կանցնի դասը, եթե սովորողը կարդալու և լսելու հետ մեկտեղ նկարի, ունկնդրի երաժշտություն, իրեն պատկերացնի պատմական մի հերոսի դերում: Իհարկե, այս ամենը կիրագործվի մեթոդների և հնարների իմացության դեպքում: Մեթոդներ ընտրելիս պիտի ուշադրություն դարձնել սովորողների իմացության մակարդակին, նախասիրություններին և դասընթացին ներառել բոլորին՝ յուրաքանչյուր խմբի համար ընտրելով համապատասխան մեթոդներ:

Այսպիսով, արդյունավետ ուսուցում կազմակերպելու, սովորողների մեջ ինքնուրույնության նախաձեռնության և ստեղծագործական ունակությունները զարգացնելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չեն կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված, կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Հանրակրթական համակարգից պահանջվում է մշակել ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:Այդ գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները՝ հիշողության,մը-տածողության,նախապատրաստվածության, ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման մակարդակը և այլն:

Հարց. Ինչպիսի՞ մեթոդներով սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ զարգացնել առարկայի դասավանդման ընթացքում:

Ինքնուրույնությունն իբրև անձի ձևավորման խթան

Ինքնուրույնությունը անձի հավաքական հատկանիշ է, որն ունի մի շարք բաղկացուցիչներ և ենթադրում է նախաձեռնողականություն, ակտիվություն, ինքնավստահություն, նպատակասլացություն: Ինքնուրույնությունն անձի կենտրոնական հատկանիշ է: Ի՞նչն է անձի անհատական զարգացման գործընթացում խթանում ինքնուրույնության ձևավորմանը: Տարբեր տարիքային փուլերում երեխան փորձում է իրեն հասանելի թվացող գործողությունները կատարել ինքնուրույն: Երեխայի ինքնուրույնության ձևավորմանը նպաստում է նաև նրան ազատելը սխալվելու վախից: Ինքնուրույնությունն այն կարևոր գործոնն է, որի կարիքը մենք ունենք անկախ քաղաքացու ձևավորման գործընթացում: Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել ինքնուրույն աշխատել: Եթե երեխաները դեռևս փոքր տարիքից սկսած սովորում են ինքնուրույն աշխատել, ապա այդ կարողությունը դառնում է նրանց սեփականությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Ինքնուրույն մտածողությունը գիտնականները դիտարկում են որպես կարևորագույն բնութագրիչ անձի զարգացման հարցում: Որքան ինքնուրույն է մարդն իր արարքների, որոշումների և գործունեության մեջ, այնքան նա հասուն անհատ է:

Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ այն համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները պետք է լինեն տարբերակված: Ուսուցիչը պետք է իր համար հստակեցնի տարբերակված ինքնուրույն աշխատանքի նպատակը՝ ապահովել

յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատանքի առավել բարձր արդյունավետությունը ինչպես դասի ժամանակ, այնպես էլ տանը:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները զարգանում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում:Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն:Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանիորեն ուսումնասիրելու ,վերլուծելու,ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:[1] Ինքնուրույնության դրսևորմամբ սովորողների մեջ ձևավորվում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ,ինչպես նաև հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը , գիտելիքներն ու հմտությունները,կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ: Ներկա ժամանակներում, առավել քան երբևէ, մարդու ցանկացած գործունեության համար առանցքային նշանակություն ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, արագ ու նպատակային գործելու, ինչպես նաև նախաձեռնող լինելու ունակությունները: Նման ունակությունների անհրաժեշտությունը բացատրվում է ներկայիս առաջ քաշած մարտահրավերներով, քանզի ամենաժամյա ռեժիմով կյանքի բոլոր ոլորտները գրանցում են աննախադեպ առաջընթաց:Հանրակրթական դպրոցում սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանն ուղղված քայլերից է նաև ուսուցչի մեթոդամանկավարժական գիտելիքների ամբողջությունը:

[1]Հանրակրթական պետական չափորոշիչ

Գրականության ակնարկ

«Նա ամեն ինչ գիտեր գրականության մասին,
բացառությամբ, թե ինչպես
վայելել այն»: - Ջոզեֆ Հելլեր

1. Ուսուցման մեթոդները

Հոգեբանների և մանկավարժների հետազոտություններն ցույց են տվել, որ ուսուցման մեջ հաջողության բացակայությունը պայմանավորված է ոչ թե աշակերտի բնածին սակավ ընդունակություններով, այլ ուսուցչի կողմից կիրառվող ոչ արդյունավետ աշխատաձևերով, որոնք, ըստ էության հաղորդում են գիտելիք, բայց չեն սովորեցնում ինքնուրույն սովորել: Սակայն սովորելու կարողությունը ինքնին չի առաջանում, այն ձևավորվում է ուսուցիչ աշակերտ համատեղ նպատակաուղղված գործողությունների միջոցով: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում մշակել գիտելիքի փոխանցման այնպիսի ուղիներ, որոնք կնպաստեն գիտելիքի արդյունավետ զարգացմանը: Ուսուցման գործընթացում գիտելիքի փոխանցման ուղիները համարվում են ուսուցման մեթոդներ:

Մեթոդը հունարեն metodos բառի հայերեն թարգմանությունն է, որը նշանակում է նպատակին հասնելու եղանակ, ուղի, որոշակի կարգավորված գործունեություն:

Դիդակտիկան, ուսուցման մեթոդ ասելով, հասկանում է այն եղանակները, ուղիները, հնարներն ու ձևերը, որոնցով զինվելով սովորողները ուսուցչի ղեկավարությամբ ձեռք են բերում գիտելիքներ, հմտություններ, կարողություններ, որոնք ձևավորվում են նրանց աշխարհայացքը, զարգացնում ճանաչողական ունակություններն ու գործնական հմտությունները:

Ուսուցման մեթոդները ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներն են:

Առանց գործունեության համապատասխան մեթոդների անհնարին է իրականացնել ուսուցման նպատակներն ու խնդիրները: Աշակերտների կողմից գրականության

էությունը, գրողի կենսագրությունը, գրական տեքստերի, ստեղծագործությունների վերլուծությամբ զբաղվելու հաջողությունը շատ բանով կախված է ուսուցման մեթոդներից:

Մեծ մանկավարժ-գիտնական Խ.Պ. Պոդլասին նշում է, որ «Մեթոդը ուսուցման գործընթացի միջուկն է, որը կապող օղակ է նախատեսված նպատակի և վերջնական արդյունքիմիջև»:Նրա դերը «նպատակներ-բովանդակություն-մեթոդներ-ձևեր-ուսուցման միջոցներ» համակարգում համարվում է որոշիչ:

Չնայած որ ուսուցման մեթոդները կիրառվում են դպրոցի ստեղծման պահից, սակայն մինչ օրս դրա էության ձևակերպման հարցում չկա միասնական կարծիք:

Որոշ հեղինակներ ուսուցման մեթոդը ձևակերպում են իբրև ուսումնական աշխատանքներում կիրառվող հնարների համակարգ, ոմանք՝ իբրև ուղի, որով ուսուցիչը տանում է աշակերտին դեպի գիտելիքը, իսկ ոմանք էլ՝ իբրև ուսուցման բովանդակության ձև:

Դիդակտիկայում տրվել է ուսուցման մեթոդ հասկացության առավել լիարժեք ձևակերպումը, այն՝ «Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտների փոխկապակցված գործունեության համակարգված եղանակն է՝ ուղղված կրթական նպատակների իրականացմանը»: Այդ գործունեությունը արտահայտվում է իմացության աղբյուրների, տրամաբանական հնարքների, սովորողների իմացական ինքնագործունեության տեսակների և ուսուցչի կողմից ուսուցման պրոցեսի ղեկավարման եղանակների կիրառման մեջ:

Մեթոդի ձևակերպման նման բազմատեսակ մոտեցումը ստիպում է առավել ուշադրություն դարձնել սովորողների ընդհանուր ուսումնական կարողություններին և հմտությունների ձևավորմանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ինչը որ նրանց դարձնում է ուսումնական գործընթացի ակտիվ և շահագրգիռ մասնակից, որը պատասխանատու է ուսուցման արդյունքների ստացման գործում:

Այսպիսով, «ուսուցման մեթոդ» հասկացության բնորոշ հատկանիշներն են՝ **նպատակը**, որը որոշում է ուսուցչի և աշակերտի գործողությունների համակարգը, օրինակ՝ գրականության պատկերացման ձևավորում, **միջոցները**, որոնց օգնությամբ իրագործվում է նպատակը, օրինակ՝ նկարների, սահիկի ցուցադրում և

օբյեկտը, որին ուղղված է գործողությունների համակարգը, օրինակ՝ գիտելիք Ոսկեդարի հայ պատմիչների կյանքի վերաբերյալ:

Ուսուցման յուրաքանչյուր մեթոդ ունի բարդ կառուցվածք և դետերմինացված կամ պայմանավորված է ուսումնական առարկայի բովանդակությամբ և նպատակներով, ինչպես նաև սովորողների իմացական գործունեության բնույթով:

Ստորև բերվում է կազմակերպման մեջ ուսուցման մեթոդների էության համալիր դիտարկման աղյուսակը.



Գիտելիքների որոնումների տրամաբանական ճանապարհների

Կազմակերպող, վերահսկող, շտկող, ուղղորդող

Ուսուցչի խոսք, տեքստեր, պաստառներ….

Տեսական, պրակտիկ, գործնական

Անալիզ, սինթեզ, համադրում…

Ուսուցման մեթոդների մեկնաբանության այսպիսի համալիր մոտեցումը անհրաժեշտություն է առաջացնում բացահայտել մեթոդների կապը ուսուցման բովանդակության հետ: Պարտավորեցնում է ուսուցչին հստակ պլանավորել իր և սովորողների փոխկապակցված գործունեության ձևերը՝ համապատասխանեցնելով այն ուսումնական նյութի բովանդակությանն ու ուսուցման միջոցներին: Դրա հետ մեկտեղ, պարտադիր է շեշտադրել մեթոդների կապը ուսուցման և դաստիարակության նպատակների հետ, հաշվի առնել իմացության տրամաբանական կառուցվածքը, դպրոցականների ինքնուրույնության մակարդակը և նրանց գործունեության կառավարման եղանակները:

Ուսուցման մեթոդի գլխավոր հատկանիշը ուսուցչի ուսուցանող և աշակերտի ուսուցանվող գործունեությունների ամբողջությունն է:

Մեթոդի բաղադրամաս է համարվում **հնարը**: Մեթոդական հնարը ուսուցման գործընթացի փոքրագույն կառուցվածքային միավորն է: Հնարներն ու մեթոդները խթանում են արժեքների ձևավորմանը: Մեթոդների մեջ պետք է կարևորել արժեքը: Արժեքը իմաստ է, այն իմաստավորում է կյանքը, էթիկայի նորմերը, ձևավորում է մտածելակերպ, որից բխում է սովորողների վարքագիծը: Արժեքները ազդում են մեր որոշումների, նպատակների և վարքագծի վրա: «Կրթությունն առանց արժեքների կաղ է, իսկ արժեքներն առանց կրթության կույր են»: Յուրաքանչյուր ուսուցիչ մեթոդներ ու հնարներ կիրառելիս պիտի առանցքային դարձնի արժեքային համակարգը և աշակերտի մոտ զարգացնի հետևյալ արժեհամակարգը՝

- Ընտանիք
- Ազնվություն
- Արդարություն
- Պատասխանատվություն
- Հավատարմություն
- Վճռականություն
- Հետևողականություն
- Հարգանք
- Հայրենասիրություն:

Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ **ավանդական և նոր, ժամանակակից մեթոդներ:** Ավանդական են համարվում

բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության, գիտելիքի փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկաց է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը[2]:

Ուսուցման ընթացքումակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Ուսուցիչը պիտի միշտ իր աչքի առջև ունենա ստորև բերված գիտելիքի ստուգման համար նախատեսված մեթոդների հարցաշարը՝

- Խոսքային մեթոդներ
- Զննական մեթոդներ
- Գործնական մեթոդներ
- Ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներ
- Բացատրական-ցուցադրական մեթոդ
- Վերարտադրական մեթոդ
- Պրոբլեմային շարադրանքի մեթոդ
- Ինքնուրույն աշխատանքի մեթոդներ
- Մասնակի որոնողական կամ էվրիստիկակական մեթոդներ
- Հետազոտական մեթոդ
- Ինքնուրույն աշխատանքի մեթոդներ
- Ուսուցման տեխնիկակական մեթոդներ
- Խճանկարի մեթոդ
- Պրիզմա մեթոդ
- Ձնագնդի մեթոդ
- Փոխներգործուն նշանների համակարգ
- Վենի դիագրամ
- Խմբավորում
- Մտագրոհ կամ մտքերի տարափ
- Հնգյակներ

---

2 · Մինասյան Ա., Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ումիջոցները,/էջ5/ Երևան, 2011

. Ապագայի անիվ

- Գաղափարների քարտեզագրում
- Տ-աձև աղյուսակ
- Քառաբաժան
- Խորանարդում…

Սակայն պետք է նշել, որ ուսուցման մեթոդներն ու մեթոդական հնարները հրահանգների կարծրացած հավաքածու չեն, որոնք պետք է կատարվեն անվերապահորեն նշված ձևով, նրանք մշտապես ենթակա են մշակման, փոփոխության և կատարելագործման: Ուսուցչի կողմից կոնստրուկտիվ մոտեցումը ուսուցման մեթոդների և միջոցների ընտրությունը դրդում է նրան նոր մեթոդների և միջոցների ինքնուրույն որոնումների, նորովի կիրառմանն ու համադրմանը, նպաստում ուսուցչի ստեղծագործական ակտիվության բարձրացմանը:Այսպիսով,վերոնշյալ մեթոդների կիրառմամբ սովորողների մեջ ձևավորվում է նախաձեռնություն,ինքնուրույնություն,ինչպես նաև ստեղծագործական ունակությունների զարգացում:

21-րդ դարում հանրակրթությունը նպատակ ունի ձևավորելու որոշակի կարողունակություններով զինված հայ քաղաքացի, որը պատրաստ է դիմագրավելու ցանկացած փոփոխության, քննական վերլուծության ենթարկելու իրադրությունը, մշակելու քայլեր, առաջարկելու փոփոխություններ, գործելու հանուն հանրության, հանուն իր երկրի բարօրության, պետականության ամրապնդման և բարգավաճման:

Հայոց (մայրենի) լեզվի, գրականության, հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ մայրենի լեզուն՝ որպես ՀՀ պետական լեզու, անկախ պետականության պահպանման, զարգացման կարևորագույն երաշխիքն է, որը անփոխարինելի դեր ունի ինչպես հենց իր՝ սովորողի, այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում: Սովորողը հայոց լեզվից, գրականությունից գիտելիք, որոշակի հմտություններ ձեռք բերելով հանդերձ՝ ուսումնասիրում է իր մայրենի լեզուն՝ որպես իր ինքնության բացահայտման և դրսևորման, որպես հաղորդակցման և համագործակցության, որպես այլ ոլորտներից գիտելիք ձեռք

բերելու, օտար լեզու սովորելու անփոխարինելի միջոց: Մայրենի լեզվի, գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները, սովորույթները: Ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:[2]

Հայ գրականության երկերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հարստացնելու սովորողի բառապաշարը, պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, ձևավորել գրական ճաշակ և ընթերցասիրություն:

Գրական և ոչ գրական, արձակ և չափածո տեքստերի ընթերցումը, քերականական-ոճաբանական վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական քննությունները, օտար լեզուներից թարգմանությունները զարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենի և օտար լեզուների հանդեպ, սովորեցնում են հարգել թե' սեփական, թե' օտար մշակույթները, գնահատել դրանք որպես համամարդկային մնայուն արժեքներ:

Գրականության ուսումնասիրումը մարդու հոգեբանությունը բացահայտելու միջոց է (Ավետիսյան Զ., Գրական ստեղծագործության հոգեբանություն). գրական կերպարների արարքների դրդապատճառների, բնավորության վերլուծությունը, նրանց հոգեբանության մեջ թափանցելու ունակությունը սովորողին հնարավորություն են տալիս հասկանալու, ճանաչելու ոչ միայն իր շուրջը գտնվող մարդկանց, այլ նաև ինքն իրեն: Գրական երկից քաղած դասերի շնորհիվ սովորողը կարողանում է կյանքում հարաբերություններ

---

[2] Թամար Ալեքսանյան, Հանրակրթության «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների փորձնական չափորոշիչ և ծրագրեր 1-12-րդ դասարաններ, էջ 1:

հաստատել, ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ, համատեղ աշխատել, ստեղծել նյութական և հոգևոր արժեքներ հանուն հայրենի պետության, հանրության բարօրության,ինչպես նաև նպաստում է զարգացնելու ստեղծագործական ունակությունները:

Հայոց (մայրենի) լեզվի և գրականության (հայ գրականության) ուսումնառության ընթացքում ձևավորվում, զարգանում և կատարելագործվում են **սովորողի անձնային նկարագիրը,** վերաբերմունքը կամ դ**իրքորոշումը իր երկրի, պետության, ազգային արժեհամակարգի, սեփական և կյանքի հանդեպ(ՀՊՉ):** [3]

Սովորել սովորեցնելու մեթոդը ենթադրում է ինքնուրույնության զարգացում: Ուստի ուսուցիչը պետք է հնարավորություն տա, որ աշակերտներն իրենք հարցեր ուղղեն միմյանց, վերլուծեն ու պատասխանեն, ինքնուրույնաբար հանգեն եզրակացությունների, արտահայտեն իրենց անձնական կարծիքները, հիմնավորեն դրանք, այսինքն՝ ակտիվորեն մասնակցեն իրենց գիտելիքի ձևավորմանը: Այստեղ ուսուցիչը նպատակ չունի լեզվական խնդիրներ լուծելու, ինչպես մայրենիի, հայոց լեզվի դասերին: Նրա աշխատանքը պիտի վերաբերի զուտ բնագրին՝ դրա բովանդակության յուրացմանը, ներքին շերտերի մեջ թափանցելու և ենթատեքստը հասկանալու նրբություններին և հերոսների բնութագրմանը: Քանի որ ուսումնական մեթոդների և մեթոդական հնարների արդյունավետությունը մեծապես կախված է երկխոսության որակից, իսկ երկխոսությունը չափազանց կարևոր է ժամանակակից կրթամշակութային կյանքում և դրված է համամարդկային արժեքների ընկալման և փոխանակման հիմքում, ապա երկխոսության կարևորագույն ուղիներից մեկը բանավեճն է: Այդ պատճառով այս մեթոդն իր տարատեսակներով կարևորվում է համագործակցային ուսուցման մեծ խմբում և մեծապես կարող է նպաստել երեխաների մտքերը ճիշտ ձևակերպելուն, արտահայտ-վելուն, սեփական տեսակետը պաշտպանելու կարողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանն ու ակտիվ գործածությանը: Ուսումնական բանավեճը մտքերի, դրույթ-ների, կարծիքների նպատակային և որոշակիորեն կարգավորված փոփոխականությունն է՝ հանուն ճշմարտության որոնման: Բանավեճի ճիշտ կազմակերպումը պայմանավորված է ճիշտ հարցադրումներով:Ճիշտ հարցադրումները խիստ կարևորվում են ողջ ուսուցման գործընթացում: Դրանց ճիշտ կիրառումը կարող է մեծ հետաքրքրություն և ակտիվություն առաջացնել երեխաների մեջ: Սովորողին պիտի թույլ տանք անկաշկանդ ստեղծա-գործելու, վերլուծելու, քննադատելու:

3Հանրակրթական պետական չափորոշիչ

Այսպիսով,ուսումնական գործընթացում մեթոդների կիրառումը ճանաչողական և ստեղծագործական գործունեության կարևոր խթան է, որը հնարավորություն է տալիս արդյունավետորեն յուրացնել ուսումնական մեծածավալ տեղեկույթը: Հարափոփոխ կյանքի բոլոր ոլորտներում, համակարգային տեղաշարժերի հետ միաժամանակ անհրաժեշտ է նոր ուղիներ որոնել ավանդական կրթական միջավայրը ժամանակակից միջավայրի փոխելու համար, որպեսզի փոխներգործության նշված հնարներն ու մեթոդները նպաստեն կրթական նպատակների իրականացմանը. Սովորողների մեջ ինքնուրույնության նախաձեռնության, ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարացմանը գրականության դասավանդման ընթացքում: Աշակերտի մեջ ինքնուրույնության նախաձեռնողականության զգացումը զուգորդվում է նաև ինքնավերահսկողության և կամային հատկանիշների զարգացմամբ: Այս համատեքստում կարևոր և առանցքային է նաև մանկավարժի դերը: Նրա խնդիրն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, որի պարագայում աշակերտները հետաքրքրված և շահագրգռված կլինեն ուսումնական գործընթացով, կձգտեն ակտիվության և նախաձեռնողականության, ինչպես նաև ընդհանուր ինքնուրույնության: Դրա համար մնկավարժը կարող է կիրառել ուսումնական գործունեության կազմակերպման նորագույն մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաները, աշակերտների հետ աշխատանք կատարելու անհատական և խմբակային ձևեր, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքներ և այն:

Եզրակացություն

Այսպիսով,սովորողների մեջ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը,ինչպես նաև ստեղծագործական ունակությունները չեն ծագում ինքնըստինքյան, դրանք անհրաժեշտ է ձևավորել,ապա զարգացնել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը և ուսուցչի կողմից ընտրված մեթոդները : Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Պետք է կարևորել ոչ միայն այն, թե ինչքան է սովորել աշակերտը, այլ նաև, թե ինչպես է սովորում: Այսինքն՝ **սովորել սովորեցնելը**: Սովորել սովորեցնելու մեթոդը ենթադրում է ինքնուրույնության զարգացում: Ուստի ուսուցիչը պետք է հնարավորություն տա, որ աշակերտներն իրենք հարցեր տան միմյանց, վերլուծեն ու պատասխանեն ինքնուրույնաբար, հանգեն եզրակացությունների, արտահայտեն իրենց սեփական կարծիքները, դիրքորոշումը, հիմնավորեն իրենց ստացած գիտելիքների չափով: Մեթոդների ծով աշխարհից ուսուցիչը կարող է իր համար գտնել այն մեթոդը, որը իրենը կհամարարի: Ուսուցիչները պետք է լինեն ստեղծագործ, ճկուն՝ իրենց դասերը աշխույժ և արդյունավետ դարձնելու համար: Կարևոր է նաև հիշել, որ մենք սովորեցնում ենք սովորողներին, ոչ թե կուրորեն հետևում գրքին կամ նյութերին: Ուշադրությունը միշտ պետք է լինի սովորելու վրա, և դասերը պետք հարմարեցվեն դասարանում գտնվող կոնկրետ սովորողների կարիքներին, այլ ոչ թե ենթադրյալ սովորողների: Սովորողների ուսումնական գործունեությունը կազմակերպելիս հարկավոր է դրանք հաշվի առնել՝ ծառայեցնելով դրանք ի բարօրություն 21-րդ դարի երեխայի, ինչպես Գ. Ղույումչյանն է բանաձևում. «Եթե երեխան թանկ չէ քեզ համար, դու նրան չես կարող կրթել ու դաստիարակել»:

Հետազոտական աշխատանքում ձևակերպած հարցին պատասխանելու համար հարցումներ եմ կատարել ուսուցիչների շրջանում: Տեսակետները տարակարծիք էին և ուսուցիչներից շատերը նշեցին, որ մեթոդներն ու հնարները կիրառում են՝ հաշվի առնելով դասարանի նախասիրությունները: Վեր հանված արդյունքները փորձել եմ ի մի բերել և ցուց տալ տոկոսային հարաբերությամբ աղյուսակի ձևով՝

Ուսուցիչների 70%	**Ուսուցիչների 50%**	**Ուսուցիչների 40%**	**Ուսուցիչների 30%**
Խմբային աշխատանքներ	Ինտերակտիվ խաղեր	Մտագրոհ, հարցադրումներ, քառաբաժան	Վենի դիագրամ, Т-աձև աղյուսակ

Այսպիսով, քանի որ մեթոդիկան դոգմատիկ գիտություն չէ, ուստի հմուտ ուսուցիչները կարող են ոչ միայն օգտվել առաջադրված մեթոդներից և հնարներից ,այլև ստեղծագործել: Նման ուսուցիչները միշտ պրպտում են, որոնում, հետազոտում, ավանդական մեթոդներին նորագույն երանգ են հաղորդում և անհատական տարրեր ներառում դրանց մեջ: Նրանք ուսուցման և դաստիարակության մեթոդները փոփոխելով ու նորացնելով՝ համապատասխանեցնում են ժամանակակակից պահանջներին, սովորողների մեջ զարգացնում ինքնույնություն,նախաձեռնություն, ինչպես նաև ստեղծագործական ունակություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սուսաննա Սարուխանյան <<Հայոց լեզու և գրականություն>>
2. Բնագրային աշխատանք, Երևան, 2017:
3. Հռիփսիմե Հայրունի, Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման մեթոդները, Երևան, 2007
4. Թամար Ալեքսանյան, Հանրակրթության «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների փորձնական չափորոշիչ և ծրագրեր 1-12-րդ դասարաններ:
5. Հանրակրթական պետական չափորոշիչ